# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 77-Ա

«25» դեկտեմբերի 2018 թվական — գյուղ Ամասիա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԼԻԱՆՆԱ ԱԲՐԱՀԱՄԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի գյուղ Ողջի, փողոց 8, թիվ 8 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար 08-091-0016-0071 կադաստրային ծածկագրով 0.12 հեկտար հողամասը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Լիաննա Աբրահամի Վարդանյանին և հաշվի առնելով քաղաքացի Լիաննա Աբրահամի Վարդանյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ողջի, փողոց 8, թիվ 8 հասցեում գտնվող 107.7 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը և օժանդակ շինությունը նվիրատվության կարգով, անհատույց, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով օտարել այդ բնակարանի վարձակալ Լիաննա Աբրահամի Վարդանյանին /հետագայում՝ Նվիրառու/:
2. Անշարժ գույքի նկատմամբ սեփականատեր ճանաչել՝
   Լիաննա Աբրահամի Վարդանյանին:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին՝
   Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
4. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերի կատարումը վերապահել Նվիրառուին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 7　　Դեմ՝ 0　　Ձեռնպահ՝ 0

| | | | |
|---|---|---|---|
| ՍԵՐՈԲ ՂՈՒԿԱՍՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |
| ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ________ | ________ | ________ |
| ՀԱՅԿ ՆԻԿՈԼՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |
| ՎԱՐԴԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |
| ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |
| ԱԼԵՔՍԱՆ ՔՈՉՈՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |
| ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ | ________ | ________ | ________ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　ՔԵՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» դեկտեմբերի 2018 թվական
գյուղ Ամասիա